ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սանկտ Պետերբուրգի Կենտրոնական պետական արխիվում (ֆ. 139) (Ուսումնական օկրուգի հոգաբարձուների ֆոնդ) պահվում է երկու հետաքրքիր փաստաթուղթ Էջմիածնի հոգեւոր ճեմարանի (Գեւորգյան ճեմարան) եւ Թիֆլիսի հոգեւոր ուսումնարանի (Ներսիսյան դպրոց) վերաբերյալ: Առաջինը ժողովրդական լուսավորության դեպարտամենտի ժողովրդական լուսավորության նախարարի օգնական Օ. Գերասիմովի՝ 1907թ. մարտի 30–ի գրությունն է՝ ուղղված Սանկտ Պետերբուրգի Ուսումնական խորհրդի հոգաբարձուին: Այդ գրությամբ Լուսավորության նախարարի օգնականը հաղորդում է իր ստացած տեղեկությունն այն մասին, որ առանց սպուգողական քննության Պետերբուրգի համալսարան են ընդունվել 4 հայ ուսանող, որոնք ավարտել են «Հայ Գրիգորյան եկեղեցու» (18 – րդ դարի վերջին եւ 19–րդ դարի ընթացքում Ռուսական կայսրությունում այդպես էին անվանում Հայ Առաքելական Եկեղեցին - Է. Կ.), «Էջմիածնի հոգեւոր ակադեմիան» եւ Թիֆլիսի հոգեւոր ուսումնարանը: Այդ պատճառով նախարարի տեղակալը պատասխան է պահանջում Պետերբուրգի կայսերական համալսարանի ռեկտորից՝ ընդունված օրենքը խախտելու համար:

Մյուս փաստաթուղթը համալսարանի ղեկավարության պատասխանն է՝ թվագրված 1907թ. մայիսի 19–ին: Ինչպես տեսնում ենք, պատասխանի համար պահանջվել է ամիս ու կեսից ավելի ժամանակ: Պատասխանի մեջ ընդգծվում է, որ ոչ մի կանոնակարգային խախտում չի կատարվել: Փաստաթղթում հետաքրքիր համեմատություն է կատարվում Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ հոգեւոր ուսումնական հաստատությունների միջեւ, գնահատական է տրվում դրանց գործունեությանը:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՐՈՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻՆ

Ուղարկվել է 30 մարտի, 1907թ.
Ստացվել է 3 ապրիլի, 1907թ.

Ժողովրդական լուսավորության նախարարությունում տեղեկություններ կան, որ Ս. Պետերբուրգի համալսարանի վարչությունը առանց սպուգողական փորձաքննության չորս ուսանող է ընդունել, ովքեր ավարտել են Էջմիածնի հոգեւոր ակադեմիան եւ Թիֆլիսի՝ Գրիգորյան եկեղեցու հոգեւոր սեմինարիան: Այդ առթիվ հայտնում եմ Ձերդ Պայծառափայլությանը, որ համալսարանի վարչության ներկայացրած որոշումը հայ հոգեւոր սեմինարիաներն

ավարտողների ընդունելության մասին անօրինական է, որովհետեւ 1906թ. հունիսի 30-ին թ. 12421 առաջին շրջաբերականը վերաբերում է միայն ուղղափառ հոգեւոր սեմինարիաների սաներին: Նույնիսկ Էջմիածնի հոգեւոր ճեմարանի ամբողջական դասընթացն ավարտողները չեն կարող ընդգրկվել վերը նշված շրջաբերականի չորրորդ բաժնի մեջ:

Հայ հոգեւոր ակադեմիան եւ սեմինարիան ավարտածները համալսարանում ուսանելու համար պետք է կայսրության արական գիմնազիաներից մեկում հասունության լրիվ քննություն հանձնեն:

Ժողովրդական լուսավորության նախարարի փոխարեն
նախարարի օգնական (товарищ) ստորագր.՝ Օ. ԳԵՐԱՍԻՄՈՎ

[Այդ նամակը Ուսումնական խորհրդի հոգաբարձուն հղում է Պետերբուրգի կայսերական համալսարանի ռեկտորին, որին եւ պատասխանում է ռեկտորը]

ՍՊԲ ԿՊՊԱ, ֆ. 139,1, թ. 31-32, գ. 10511:

Սանկտ Պետերբուրգի համալսարանի ռեկտորից
19 մայիս 1907թ.
N 647

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՐՈՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻՆ

Համալսարանի խորհուրդը, լսելով ժողովրդական լուսավորության նախարարության դեպարտամենտի մարտի 30–ի թ. 7106 առաջարկությունը, որ վերաբերում է հայ-գրիգորյան հոգեւոր հաստատություններն ավարտած անձանց համալսարան ընդունելուն եւ ծանոթանալով այդ հաստատությունների դասավանդման մասին Ն. Յա. Մառի բացատրություններին, որը մոտիկից գիտե ուսումնական գործի դրվածքը նշված հաստատություններում, որոշեց շեշտել, որ հայկական հոգեւոր հաստատություններն ավարտածների ընդունելության ապօրինությունն ապացուցվում է 1906թ. հունիսի 30–ի թ. 12421 առաջին շրջաբերականի ծանոթագրության վկայակոչմամբ, որտեղ մասնավորապես ասվում է, որ այդ ծանոթագրությունը վերաբերում է միայն ուղղափառ հոգեւոր հաստատությունների սաներին: Պետք է նշել, որ նշված ծանոթագրությունը մշակվել, հաստատվել եւ օրինական ուժ է ստացել՝ կախված ուղղափառ հոգեւոր սեմինարիաների դասընթացի ծավալից, այդ հաստատությունների շրջանավարտների՝ համալսարանական գիտություններ ունկնդրելու պատրաստության աստիճանից, ոչ թե ինչ–որ մասնագիտական կամ ազգային բնույթի կողմնակի նկատառումներից: Մինչդեռ հայկական հոգեւոր ուսումնական հաստատությունների հանրակրթական առարկաների դասընթացը ոչնչով չի զիջում ուղղափառ սեմինարիաների դասընթացին: Ընդհակառակը, այն ավելի մոտ է մի կողմից՝ գիմնազիաների, մյուս կողմից՝ ռեալական ուսումնարանների դասընթացներին:

Հայկական սեմինարիաների ծրագրերի գլխավոր տարբերությունը պետական գիմնա-

զիաներից հին լեզուների դասավանդման բացակայությունն է: Այդ պակասն ինչ–որ չափով փոխհատուցվում է հին հայերենի (գրաբարի) եւ հայ հին գրականության ուսուցմամբ, նաեւ հին հայերենով պահպանված դասական գրական հուշարձանների, առավելապես Արիստոտելի եւ Պլատոնի գործերի ուսումնասիրությամբ: Էջմիածնի ճեմարանում վերջին ժամանակներս դասավանդում է նաեւ հունարեն, իսկ սեմինարիաներում ընդհանուր պատմության դասընթացին համեմատաբար ավելի մեծ տեղ է հատկացված, քան պետական գիմնազիաներում՝ Հին Արեւելքի պատմությանը: Դրանից բացի, հայկական սեմինարիաներում լավ է նոր լեզուների դասավանդման, շրջանավարտները բավարար չափով տիրապետում են կամ ֆրանսերենին (Ներսիսյան սեմինարիա) կամ գերմաներենին (Էջմիածնի ճեմարան), եւ լավ սովորողներն ազատ հաղորդակցվում են նշված լեզուներից որեւէ մեկով: Ծրագրային տարբերությունների մեջ պետք է նշել այն հանգամանքը, որ հայկական սեմինարիաների բարձր կուրսերի ուսանողները լուսավորչական այն է՝ հայկական տարրական դպրոցներում դասատու աշխատելու նպատակով, անցնում են մանկավարժության եւ հոգեբանության հիմունքներ առարկաները՝ որոշ մաթեմատիկական եւ բնագիտական առարկաների հաշվին, որոնք ավելի մեծ ծավալով են անցնում, քան ուղղափառ սեմինարիաներում:

Խոսելով հայկական սեմինարիաների մասին՝ գլխավորապես պետք է նկատի ունենալ Էջմիածնի հոգեւոր ակադեմիան, Թիֆլիսի Ներսիսյան եւ Նոր Նախիջեւանի հոգեւոր սեմինարիաները: Դրանք ավանդույթներ ունեցող միջնակարգ ուսումնական հաստատություններ են: Առաջինը բացվել է 1871 թ. [1], իսկ երկրորդը վաղուց է նշել իր 75-ամյակը[2] (բացվել է 1824 թ.- Է. Կ.): Էջմիածնի սեմինարիայում 80-ական թվականներից մինչեւ Մակար Կաթողիկոսի մահը տիրապետող էին աստվածաբանական առարկաները, բայց վերջին տասնհինգ տարին այնտեղ աստիճանաբար ուժեղանում է հանրակրթական առարկաների եւ հատկապես մաթեմատիկայի դասավանդումը:

Նշված սեմինարիաներում ծրագիրը հաջողությամբ է կատարվում. այնտեղի դասախոսները պատրաստված անձնավորություններ են եւ իրենց կրթությունն ստացել են կա՛մ ռուսական համալսարաններում, կա՛մ արտասահմանում : Դեպքեր են լինում, երբ նրանցից ոմանք միաժամանակ դասավանդում են նաեւ պետական ուսումնական հաստատություններում: Հայկական սեմինարիաներում ռուսաց լեզուն հատուկ ուսումնասիրության առարկա է եւ գլխավոր առարկաներից մեկը: Մեծ ուշադրություն է դարձվում ռուսերեն շարադրություններին եւ գրավոր աշխատանքներին: Ռուսաց լեզվից բացի, ռուսերենով են դասավանդում ռուս գրականության պատմություն, Ռուսաստանի պատմություն եւ Ռուսաստանի աշխարհագրություն առարկաները: Մնացած առարկաները դասավանդվում են հայերենով, բայց ձեռնարկները եւ դասագրքերը այժմ եւս մեծ մասամբ ռուսերեն են. մաթեմատիկայի, ֆիզիկայի, նույնիսկ ընդհանուր պատմության դասավանդման ժամանակ գործածվում են գիմնազիաներում ընդունված դասագրքերը:

Դիտարկումների համաձայն ազատ ունկնդիրների շարքում հայ սեմինարիստները միշտ գերակշռում են ընդհանրապես արեւելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրաց-պարսկական բաժնի ոչ բազմամարդ լսարաններում: Հայկական սեմինարիաների շրջանավարտ-

1 Պետք է լինի 1874 թ.- Է. Կ.

2 Բացվել է 1824 թ.- Է. Կ.

ներն իրենց զարգացման մակարդակով բոլորովին չեն զիջում ուղղափառ սեմինարիաների սաներին: Նրանց պատրաստվածության աստիճանի մասին կարելի է դատել եւ համոզվել բազմաթիվ օրինակներով, երբ սեմինարիաների շրջանավարտները, պատրաստվելով հին լեզուների քննության, հասունության վկայականի հաջող քննություն են հանձնում գիմնազիաներում: Զրկված լինելով մեր համալսարաններն ընդունվելու հնարավորությունից՝ նրանք սովորաբար մեկնում են արտասահման: Հայկական սեմինարիաների սաներին են պատկանում տասնյակ դոկտորական ատենախոսություններ՝ պաշտպանված ֆրանսերենով եւ գերմաներենով, ընդ որում դրանցից մի քանիսն իսկապես արժեքավոր եւ օգտակար ուսումնասիրություններ են, ներդրում՝ այս կամ այն մասնագիտության մեջ: Իբրեւ ազատ ունկնդիրներ՝ նրանք հաջողության են հասնում նաեւ մեզ մոտ: Համալսարանի խորհուրդը նշված հայկական սեմինարիաների շրջանավարտների առաջ համալսարան ընդունվելու համար խոչընդոտներ հարուցելու ոչ մի հիմք չի տեսնում, իհարկե բոլորիս հայտնի պայմաններով՝ լատիներենի իմացությամբ, իսկ բանասիրական ֆակուլտետի համար՝ երկու հին լեզուների: Անհնար է չնկատել, որ հայկական սեմինարիաների շրջանավարտների առջեւ ռուսական համալսարան ընդունվելու բացառիկ դժվար պայմաններ դնելով կօժանդակենք հայկական միջնակարգ հաստատություններից դեպի արեւմտաեւրոպական բարձրագույն կրթարաններ, առավելապես գերմանական համալսարաններ, երիտասարդ ուժերի հոսանքի ուժեղացմանը, որից կթուլանա հայրենական համալսարանների ազդեցությունը եւ, ընդհանրապես կարգելակենք ռուսական լուսավորության գործը Կովկասում:

Համալսարանի ռեկտոր
Խորհրդի քարտուղար՝ իսկական պետական խորհրդական ԲՈՐՄԱՆ

ՍՊԲ ԿՊՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 10511, թ. 21: